

# ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՅՏՈՒԱՑԻ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԱՆՈՐ ԳՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎՐԱՅ

## Ա

**Ս**որենացին յիւղ պատմագիրներուն մէջ ժամանակագրական կարգով առաջին կը համարուի Մովսէս Կաղանկատուացի, պատմիչ Աղուան՝ որ կը նկատուի ապրած և երկասիրած եւթներորդ դարուն: Այս Մովսէս իր եռաշատոր պատմութեան մէջ (տպ. Փարիզ. Կ. Վ. Շահնագարեան) շատ բան բառացի փոխ կ'անէ Խորենացիէն, որ ինչպէս առ հասարակ մեր բոլոր պատմագիրներուն միակ ստոյգ, անվիճելի և վաւերական աղբիւրն է մեր պատմութեան հնագոյն ժամանակներուն համար, նոյնպէս ալ Կաղանկատուացի Մովսէսին՝ Աղուաններու պատմութեան առաջին ժամանակներուն համար:

Փոխառութեան եղանակին համար ահաւաստիկ համեմատական երկու հատուածներ.

ԻՌՐԵՆԱՑԻ

ԿԱՂԱՆԿԱՅՏՈՒԱՑԻ

Եթէ սրպէս կարգեաց Վաղարշակ զարեմուտս և զհիւսիսի մերոյ աշխարհիս: . . . Աստ կոչեցեալ զվայրենի եկամուտ ազգն, որ է դաշտին հիւսիսոյ և որ զստորտուօվ մեծի լեռինն Կաւկասոյ, և որ է հովիտս կամ է ձորս երկայնագոգ խորացեալս, է լեռնէն՝ որ զհարաւով՝ իջեալ մինչ է դաշտաբերանն մեծ. պատուէր տալով զաւազակութիւն և զմարդաւուրթիւն ի բաց քեցիլ յինքեանց, և հրամանաց և հարկաց արձունի հպատակ լինել. որպէս զի միւսանգամ տեսեալ զնոսա, առաջնորդս և իշխանս հանդերձ զեղեցիկ կարգօք հաստատեցէ: Եւ արձակէ զնոսա հանդերձ արամբք իմաստնովք և վերակացուօք յերմէ: (Խոր. Բ. 2.):

Յետ սորա մեծ և անուանի և բազմաբեր զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմաւ կալուրթիւն՝ զայր անուանի և յամենայն զործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան. առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր: Բայց զայս զիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի՝ մոռացումն եղև մեզ յառաջին մատենին յիշատակել, զչունդս սիտական՝ որ ժողանդեաց զդաշտն Աղուանից, և զլեռնակողմն նորին դաշտի, է գետոյն Երասու:

. . . Վաղարշակ արքայն Հայոց, . . . է կարգելն իւրում զհիւսիսայինսն՝ կոչեաց զվայրենի եկամուտ ազգս որ է դաշտէն հիւսիսոյ կամ որ զստորտուօն Կաւկասու, կամ է հովիտս կամ է խորածորս զհարաւով մինչև ցմուտս դաշտին,

պատուէր անէր զաւազակութիւն և զմարդաւուրթիւն թողուլ. և հարկաց արձունի հնազանդ կուլ:

Այս կարգեաց նոցա առաջնորդս և վերակացուս, յսրոց զլիւսուսը ոմն է Սիտական տուրմէ Յարեթական ինչոց կարգի հրամանով Վաղարշակայ Առան անուան,

որ ժողանդեաց զդաշտն և զլեռնին Աղվանից է գետէն Երասիսայ մին.

խոյ մինչև 'ցածուրն' որ ասի Հնարակերս. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա կոչեցան Աղուանք. զի աղու ձայնէին զնա:

Եւ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ՝ կարգեցաւ ի Քարթեէն Վարդաբակայ կողմնակալ ընդաւոր: Ի սորա զաւակէ ասեն սերեւ զազգ Աւտեացոց և Քարբմանացոց և Ծովքեացոց և Քարգարացոց ի իշխանութիւնն: (Խոր. Բ. Ը.):

չև ցածուրն Հնարակերս: Եւ աշխարհն յաշխարհն յանուն քաղցրութեան Աղվանք. զի աղու ձայնէին զնա վասն քաղցրութեան բարուցն:

Ի սորա ծննդոց Առանայ, ասեն, անուանի և քաջս կարգեցան կողմնակալս ընդաւոր ի Քարթեէն Վարդաբակայ: Եւ ի սորա զաւակէն, ասեն, սերեւս զազգս Աւտեացոց և Քարբմանացոց ի իշխանութեանց: (Մով. Կաղ. Ա. Հատ. Էջ 93):

Կաղանկայտուացին իր պատմութեան մէջ տեղ մը նաև կը յիշէ Խորենացին, Մովսէս ֆերորդահայր ծանօթ անունով. ահա իր խօսքերը. « Յոյժ ցանկայի էր ըստ կարգաց զիտել զպատմածս, որ ինչ յԱռանայ նախագահութենէն ցայսօր \* գործք. բայց արևելեայցս բազմազգութիւն ամբոխեւլ ցուցանէ զորպէ՛սն, (այսինքն թէ ինչպէս այն պատմութիւնները չնջուած), կորսուած կամ անյիշատակ մնացած են) և կտակարանացն Հրկիզութիւնք. սակայն յայժմ վայրի նպատակատարէ մեզ ֆերորդահայրն Մովսէս (ի պատմելու) զպատեբազմելն Արտավազդայ ընդ Հռովմայեցիսն »: (Մով. Կաղ. Ա. Հատ. Էջ 97):

Պարզ է ուրեմն թէ Կաղանկայտուացին կատարելապէս կը ճանչնայ Խորենացին:

**Բ**

Առ Հասարակ ընդունուած է մեր մատուցած զրուցեան պատմութեան մէջ՝ թէ Կաղանկայտուացին եօթներորդ դարէն է, ինչպէս վերը յիշուեցաւ. այս կարծիքն առաջին անգամ յայտնեց և Հաստատեց Եւստակիոս Կարապետ վարդապետ՝ քննելով Կաղանկայտուացիին պատմութիւնը և գնելով այն գրքէն քանի մը օրինակներ իբրև պայցոյց իր ըսածին: Այս քննութիւնը մաս կը կազմէ այն ընդարձակ նախարանին՝ զոր գրած է իր Հրատարակած Կաղանկայտուացիին սկիզբը, և ուր կը խօսի Աղուաններու պատմութեան, աշխարհագրութեան, ազգագրութեան և լեզուին վրայ ընդարձակօրէն և մանրամասնաբար: Ահա իր խօսքերը.

« Հետագոտեալ իմ խնամօք ի գիրս իւր՝ « (Մովսէսի Կաղանկայտուացւոյ) գտի Հաստատի ցոյցս ըստ որոց մարթ է, անտաւա ըստ Կաղանկայ, Համարել զնա կեցեալ ի սկզբան է դարուն առ Վիրոյի կաթուղիտու, որում և ուղեկից երև յերթիք « նորա յողոյն Եւստի՝ արքայորդոյն թազուց, և առ Չևանդի իշխանաւ: Ի զուրին « 18: Ազրոց, ի պատմելն զաղանդոյն մատուցանութեան զոր երարձ արքայն Վազգան \* , յաւերս և զոր բերեալ իսկ տեւս « սաք բազումք »: Ի պատմելն զհանդիպումն « Վիրոյի արքայորդոյն թագրաց, ասե. Բ, »

« 14. « անդ տեսաք զբազմոցս նոցա . . . և զընծայ ողուներն որ բարձեալ ի վերայ « բազկաց մերոց »: Եւ ի զուրին 28 նոյն « Գրոց ի ճառելն զհանդերձանացս պայտատան « Չևանդի իշխանին, յայպէս գրե. « յայն « ժամ լինէր անդ Համաշխարհական ժողով . . . և տեսանէաք զթագաւորական « Հաստ . . . տեսաք օրհնել . . . ի գրօսան « խաղոց տեսանէաք . . . »: Կարձեալ ի « զուրին 32, որ յաղագս զիւտի Մերթ « բեան խաչին \* « զոր ոչ (միայն) մեք, այլ « աշխարհ ամենայն եղեն տեսողք »: Եւ զի « փառաւոր իշխանն Չևանդի բկաց ի կէսն « է դարուն, զՄովսէս ևս Համարելի է ժամ « մանակակից նմին և տողեալ զպատմական « գիրս իւր »: (Մով. Կաղ. Ա. Հատ. յաւառարան. Էջ 82-83):

**Գ**

Եւստակիոսի վարդապետին մէջ բերած օրինակներն արդարև բաւական զօրեղ են Հաստատելու Համար թէ Կաղանկայտուացին կամ պատմուած դէպքերուն Հեղինակը ո՛վ որ է, սկաննատես է այն դէպքերուն որ կը պատմէ: Ուստի առանց երկբայութեան կըրնանք զայն ժամանակակից գնել Վաչագան Բին, Տէր Արսաի, Չուանդիի և Եղիազար կաթողիկոսի:

\* Մասկայի ապ. զնէ՛ ցայսօր:  
\*\* Մերթուքեան խաչի զիւտն եղաւ Եղիազար կաթողիկոսի օրով:

\* Այն է Վաչագան Բ բարեպաշտն:

Բայց կաղանկայտուացիին պատմութիւնը կը բաժնուի երեք գիրք. Առաջինը կը պատմէ Աղուաններու պատմութեան սկիզբէն մինչև ժողովարգանանց պատերազմը (451). Երկրորդը կը համար մինչև մեր Եզր կաթողիկոսի ժամանակը (640), իսկ Երրորդը մինչև Սմբատ Ա-ի մահը (915): Հետևաբար զժողովարգանք մը կայ այս տեղ, եօթներորդ դարէն մէկը չի կրնար անուշտ ժ դարուն պատմութիւնն ընել. այս զժողովարգանքին ալ վերցնելու համար՝ Շահնագարեան ենթադրած է թէ կաղանկայտուացիին պատմութեան երրորդ գիրքը միևնոյն հեղինակին գործը չէ, այլ շարայարուժիւն ուրի մէկէն՝ որ կ'ապրէր տասներորդ դարուն:

Գ

Այս համարտու ուսումնասիրութեան նպատակը պիտի ըլլայ հաստատել թէ Մովսէս կաղանկայտուացիին պատմութիւնը միակ գրչէ ելած չէ, այլ խմբագրութիւն է այլևայլ գրութիւններու, և կաղանկայտուացիին Մովսէս հաւաքած, գասաւորած և կարգադրած է գանձը տասներորդ դարուն:

Այս ապացուցանելու համար գտնենք նախ վերայիշեալ շորտ աններուն ապրած թուականը (Վաչագան Բ, Տէր Արաս, Չուանչիր, և Եղիազար կաթողիկոս): Ասոր համար ալ բաւական զժողովարգանք կայ, այն պատճառով որ կաղանկայտուացիին ոչ թուական կը յիշէ, ոչ թագաւորի մը կամ կաթողիկոսի մը ժամանակակից տար իշխանները, և ոչ ալ երկու համանուն թագաւորներու առաջին կամ երկրորդ ըլլալը. այսպէս Աղուան թագաւորներուն մէջ երկու վաչէ կայ և երկու ալ Վաչագան, որոնք միշտ կը շփոթուին իրարու հետ, մանաւանդ որ Մովսէս շարտուսեայ կարգով չ'պատմեր, այլ անկարգ ու խառնակ. այնպէս որ այս գլուխը ներկայ ժամանակի դէպքի մը պատմութիւնն է, յաջորդ գլուխը երկու զարապալուան դէպք մը:

Ուտի ղիւրաթեան համար լաւ է զնել հոս Աղուան թագաւորներուն շարքը:

Աղուաններուն բուն ժամօթ պատմութիւնը կ'սկսի Վաչագան առաջին քաջէն. յետոյ կը յաջորդեն կարգով՝

- Վաչէ Ա
- Ռուսայր (ժամանակակից Տրգատի)
- Յուշագան (Մոսկվ. տպ. Վաչագան (Բ))
- Յուրհուան (Նոյն՝ Մրնհաւան)
- Սատոյ
- Ասայ

Ետուղէն (ժամանակակից մեր Ս. Մեսրոպին)

Վաչէ Բ  
 Վաչէ Բէն ետքը՝ երկիրը կը մնայ 30 տարի անիշխան. յետոյ կը նստի Վաչագան Բ բարեպաշտը, որու ժամանակակիցն է Մովսէս կաղանկայտուացիին՝ առաջին անգամ ըստ Շահնագարեանի: Վաչագան Բէն ետք դարձեալ անիշխանութիւն մինչև Չուանչիր. այս շրջանը կը հաշուենք Աղուան կաթողիկոսներու օգնութեամբ: Տէր Արաս՝ Վաչագան Բէն ետք առաջին կաթողիկոս՝ որ կը նստի մօտ 552ին, յետոյ Տէր Վիրայ՝ որուն հետ Մովսէս կ'ուղղեցի իբրև պատգամաւոր խազրաց արքայորդի Շաթին, Տէր Զաքարիա, Տէր Յովհան, Տէր Ռիտտանէս՝ ժամանակակից Չուանչիրի և Տէր Եղիազար՝ որու օրով կը կատարուի խաչի գիւտը:

Վաչէ Բ կ'ապրէ 470ին մօտաւորապէս, քանզի կաղանկայտուացիին ունի նամակ մը ուղղեալ մեր Գիւտ կաթողիկոսէն այս Վաչէին (Մով. կաղ. Ա. հատ. էջ 103): և որովհետև Գիւտ կը նստի 465-475, Վաչէ ևս համարելի է 470ին: Լայնաբար հաշուելով և ենթադրելով թէ Գիւտի վերջին տարին նստաւ Վաչէ Բ, Վաչէի թուականը գնենք 475՝ որմէ աւելի ուշ անկարելի է բացարձակապէս: Այս թուականին վրայ աւելցնելով անիշխանութեան երեսուն տարուան շրջանը, կը գտնուի Վաչագան Բ բարեպաշտին թագաւորութեան թուականը՝ դարձեալ լայնաբար, այն է 505՝ գոնէ ամենէն ուշը: Գարձնայ՝ Տէր Արաս կաթողիկոս նստած է 552ին, որովհետև կաղանկայտուացիին կը յայտնէ թէ. « Յերկրորդ ամին Խորրովո՛ւ »

« արքայից արքայի, յորժամ զսկիզբն (եղին) »  
 « Հայ թուականին, ի սոյն ամի փոխեցին »  
 « զաթոռ հայրապետութեանն Աղվանից ի »  
 « Չողայ քաղաքէն ի մայրաքաղաքն Պարս »  
 « տու վանն Հինակաւոյն արաւանաց թնա »  
 « մեց խաչին Գրիտոսի: Եւ նստուցին »  
 « հայրապետ զՏէր Արաս ի գաւառէն Մեծ »  
 « իրանց »: (Մով. կաղ. Ա. հատ. էջ 219): Այս Արաս կաթողիկոսէն սկսելով առաջ կ'երթանք և կը հաշուենք յաջորդ կաթողիկոսներուն թուականը մինչև Եղիազար, որու ժամանակակից կը յիշուի կաղանկայտուացիին վերջին անգամ՝ գոնէ ըստ Շահնագարեանի:

Արաս կը նստի	44 տարի՝	552-596
Վիրայ	» 34	» 596-630
Զաքարիա	» 17	» 630-647
Յովհան	» 25	» 647-672
Ռիտտանէս	» 12	» 672-684
Եղիազար	» 6	» 684-690

Շահագործանի քննութեան համեմատ պէտք է ընդունել թէ Մովսէս Կաղանկայա-տուացին ժամանակակից է ամբողջ այս չրխանին, այսինքն Վաչագան Բէն մինչև Եղիազար (505—690), հարիւր ութսուն և հինգ տարուան միջոց մը և աւելի ևս որովհետև 505ին՝ Վաչագան Բի թագաւորութեան ժամանակ՝ դարձեալ պատմութեան համեմատ՝ Մովսէս ակնատես եղած էր մտգիւրուն տանջանարաններուն։ (Մով. Կաղ. Ա. Հատ. էջ 144)։ Արդ՝ այնպիսի դէպքի մը ակնատես ըլլալու և յետոյ ալ զայն յիշել կարողանալու համար՝ պէտք է որ Մովսէս զոնէ 10—15 տարեկան եղած ըլլար, որով կը զանուի անոր ծննդեան մտաւար թուականը՝ 490—495։ Ինչ որ ալ ըլլայ անկարելի է որ Մովսէս 195—200 տարի ապրած ըլլայ և հետևարար անկարելի է նաև որ ժամանակակից եղած ըլլայ այն դէպքերուն և այն չրխանին։

Ե

Մովսէս Կաղանկայաժողովարանի ապրած է տասներորդ դարուն. և ասոր ապացոյց այն է՝ թէ իր պատմութիւնը կը հասցնէ մինչև տասներորդ դար, բնաւ պատճառ մը չունինք ըսելու համար թէ Աղուաններու պատմութեան երրորդ գիրքը նոյն Մովսէսէն չէ, այլ ուրիշ Մովսէսի մը շարայարութիւնը. քանի որ գրքին վերտառութիւնը այդպիսի բան մը չ'յայտնել, այլ ընդհակառակը կը հաստատէ թէ միւսնոյն հեղինակին գործն է. « Մովսէսի և Կաղանկայաժողովարանի երրորդ գիրք պատմութեան Աղուանից »։

Նոյն իսկ Շահագործան այս կարծիքն ունեցած է՝ արդէն ընդունած ըլլալուն համար թէ Մովսէս եօթներորդ դարէն է։ Արդ՝ քանի որ կը հաստատուի թէ Մովսէս այն չրխանին ժամանակակից չլինար ըլլալ, անհիմն կը մնայ Շահագործանի այս հետևութիւնն ալ՝ թէ Աղուանից պատմութեան երրորդ գիրքը նոյն Մովսէսէն չէ։

Աւրիշ ապացոյց ինչո՞ւ համարուի այն թէ Մովսէս կը յիշէ Բագրատունիները, այնպիսի տեղ մը՝ ուր պէտք չկար յիշելու և ուր միայն ցեղերուն կամ նահարարութիւններուն վրայ խօսք չկայ. « Աստ բարձաւ Թագաւորութիւն « ՍԱՐՅԱԿՈՒՆԵԱՅ, և Հայրապետութիւն ի « ցեղէ արոյն Գրիգորի։ Իսկ ի՞նչ յաղագս « Բագրատունեաց կամեցիս զիտել, Պա- « րոյր Սկայորդի կոչեցեալ Հրաչեայ՝ Թա- « քաւոր Հայոց՝ որդի Հայկակայ, որ խն- « գրեաց յարքայէն Բարեկացուց զմի ոմն ի

« գերեղոցն Հրէից Երաթ անուն, զոր անեալ « բնակեցոյց յերկրին Հայոց մեծաւ պա- « տուով։ Ի սմանէ սերեցաւ ազգն Բագրա- « տունեաց ի նուազել մեծագոյն ազգին Յա- « րեթականի »։

Կը տեսնուի որ Բագրատունի ցեղը մասնաւորաբար և առանձին՝ իրեն համապատիւ Արշակունեան ցեղին կը յիշուի ասոնցով վերջը. իբրև թէ Մովսէս ըսել ուզէր՝ թէ Արշակունիներէն վերջ կը Թագաւորեն Բագրատունիները։ Բագրատունեան այս յիշատակութիւնն ուրեմն կ'ակնարկէ թէ այն ժամանակ՝ ուր Մովսէս գրեց այս հաստատուի՝ Բագրատունիք արդէն մեծ դեր ունէին մեր մէջ և արժանի էին մի միայն իրենք յիշատակուելու և իբրև Արշակունեաց յայորդ նշանակուելու։ Բանաւոր է այս ժամանակն զննել յարուն՝ ուր Բագրատունիները կը տիրեն արդէն երկրին։

Աւրիշ ապացոյց մը դարձեալ, — Կաղանկայաժողովարանի կը յիշուի առաջին անգամ Ստեփաննոս Առողիկէն ետք՝ ԺԱ դարուն վերջերը և աւելի ետք՝ յայորդ դարերուն մէջ։ Առողիկ որ Տիեզերակոս պատմութիւն կը գրէ և որ կը յիշատակէ մեր պատմագիրները իր պատմութեան նախաբանին մէջ չ'յիշեր Կաղանկայաժողովարանի, Այս ապացոյց է ուրեմն թէ Կաղանկայաժողովարան է թէ՛ Առողիկէն վերջ չէ, հազիւ անոր ժամանակակից է։

Զ

Եթէ Կաղանկայաժողովարան տասներորդ դարէն է, քնական է ուրեմն թէ այն դէպքերը որ կը պատմէ Աղուաններու պատմութեան առաջին ժամանակներուն վրայ, քաղեալ ըլլան աւանդութիւն և մանաւանդ այլևայլ պատմագիրներէ. ինչպէս ինքն իսկ տեղ մը կը յայտնէ. « Բատու և ի բուն պատմագրաց « այսպէս ծաննաք . . . »։

Դարձեալ, կան երեք գրութիւններ որոնք բառացի օրինակաւսած են ուրիշ հնագոյն աշխատութիւններէ. մին իր յիշատակարանովը միասին։ Այսպէս էլ 221 կը կարդանք։ « Բատալնամ մմի Հայրապետութեան Ա- « բասայ, տեղի եւ անարժանս վեհեկ ի « տեսեան այր մի անապատական, որ անէր « նշան աստուածային խաչի գրեալ. և տներ « ցիս զանուն իմ։ « Եւ ասեմ. ո՞վ ես դու, Տէր, և նա ստէ « ցիս. ես եմ Պողոսիկ, արդ եկ, երկրպա- « զեա՛ խաչիս, և մի մերձեցցիս ի օս։ Եւ « ես զարթօնցեալ ի քնոյ . . . . . Եւ ես

« Վեհիկ հիացեալ կայի ընդ միտս իմ մինչև  
« ցեօթն ամ՝ խնդրելով յամենողորմէն Աս-  
« տուծոյ . . . Եւ ապա յարուցեալ ես Վեհ-  
« հիկ՝ շոգայ առ սուրբ Հայրապետն Ա-  
« րաս . . . » :

« Ես Աղբիւնէն, որ գլխատակարան գրե-  
« ցի, մաղթեմ յիշել գանարժանութիւնս իմ  
« ի յընթերցողացդ, և զգայարանս Արաս  
« մի ևս մոռանալ, յորոյ ժամանակս լոյս  
« աշխարհի ծագեցաւ, ընդ նմին և զՎեհիկ՝  
« կարապետ նոցին, յիշեացէ՛ Տէր Աստուած  
« ողորմութեամբն իւրով մեծաւ, և որք յի-  
« շէքդ՝ ձեզ վարձս ընդ երանելի վկայիցն՝  
« Հասուցէ՛ Բրիտոսս այժմ և յաւիտեանս .  
« ամէն \* » :

Ինչպէս կը տեսնուի՝ Վեհիկ գրած է պատ-  
մութիւնը, ուստի և կը խօսի միշտ առաջին  
դէմքով և անեմ, ընդ միտս իմ, լոցայ, ես  
Վեհիկ, և այլն և այլն. յետոյ Աղբիւնէն ա-  
նուն մէկը օրինակած է Վեհիկի պատմու-  
թիւնը իրմէ ևս աւելցնելով այն յիշատա-  
կարանը. « Ես Աղբիւնէն և այլն » : Յետոյ  
այ Մովսէս Կաղանկայտուացին միամիտ մէ-  
կը՝ գրած է Աղբիւնէի օրինակութիւնը և  
յիշատակարաննով միասին առած է իր պատ-  
մութեան մէջ :

Էջ 277, ԺԵ. գլուխը « Վասն աստիկա-  
« ցեայ սովոյն, սրոյն և գերոտրեանն ի միս-  
« սին » քաղուած է Վիրայի պատմութենէն,  
ինչպէս որ զխուն վերջը կը յիշատակուի.  
« Ես Վիրայ՝ Աղուանից և Լիփնաց և Չողայ  
« կաթողիկոս, թողում ստել զայլն ամենայն,  
« զպէտպէս զազրարիս՝ գմարմնոյ սևութիւնս  
« և կնտութիւնս զլիսոց, և այլն, և այլն . . . »  
(Մով. Կաղ. Ա. Հատ. էջ 279-280) :

Էջ 417 Մ. գլուխը « Վասն Յովսէփայ  
« անապատականի րնակելն յՂրճախ, և երբն  
« յԵրոտասդեմ, ընդ նմին և քերտնն երչ-  
« իսայացն սրբոց » , քաղուած է նոյն Յով-  
սէփ անապատականի պատմութենէն բառ  
առ բառ. « Ի Յագագորութեանն Հերակղիոսի  
« և Լախախ Թագաորութեանն Յագիերթի, և  
« և ի կաթողիկոսութեանն Հայոց Եղբի, և  
« ի սպարապետութեանն Մուշեղի, ի Սիւ-  
« նեաց տէրութեանն Գրիգորի, յեպիսկո-  
« պոսութեանն Մամբուսազայի . . . գնացի ես  
« Յովսէփ անապատական ի գաւառէն Գե-  
« դամայ՝ յանապատէ Բրտի այրից վասն չար  
« նեղութեան ժամանակի . . . խոյս տոռեայ

« իս՝ եկի ի գաւառս Արճախոյ . . . ընկա-  
« լեալ գիս գանարժանս . . . Տնեկեցաւ ի սիրտ  
« իմ ցանկութիւն ստանալ ի նշխարաց  
« արքայն Յովհաննու . . . ընկառեալ իմ Յով-  
« սեփայ՝ քրիի ի նոյն վկայարանս . . . » :

Ստորագծուած բառերը կը ցուցնեն թէ  
այս գլուխն ալ բառացի օրինակութիւն է  
առաջին Հեղինակէն :

Այս օրինակները բաւական են արդէն  
ցուցնելու համար թէ խմբագրութիւն է կա-  
ղանկայտուացին, և այն հատուածները որ  
Շահնազարեան մէջ կը բերէ և որոնց որ  
արդարև կանանառես մըն է միշտ խօսողը,  
գրուած են ո՛չ թէ Կաղանկայտուացի Մով-  
սէսէն, այլ անոր առաջնորդող պատմագիր-  
ներէ. և Մովսէս բառ առ բառ կ'օրինակէ  
անոնցմէ :

Այս պատճառով է որ Կաղանկայտուացին  
խառնակ պատմութիւն մըն է լի կրօնական  
սուսուցիչներով (Հմմտ. 147-182, 193-211),  
խաչի և սուրբ նշխարներու անվերջ դիտու-  
ումով (Հմմտ. էջ 417-420, 95-97, 147-157,  
220-224, 325-333, 340-349). երբեմն դէպ-  
քերն անկարգ (100-115), պակաս, խառնակ  
(217), զլիաւոր արժէքը յիշատակութիւնն  
է քրտնի մօտ պաշտօնական թուղթերուն և  
Գաւթակի ողբին :

Է

Ի՞նչ է սակայն Կաղանկայտուացիին գրու-  
թեան բուն թուականը :

Յիշուեցաւ թէ պատմութեան երրորդ գիր-  
քը կը հասնի մինչև 914. ուրեմն Մովսէս  
այ այս թուականին մօտերը գրած պիտի  
ըլլայ. դնենք 920. Կրնայ աւարելուի սա-  
կայն որ — եթէ Կաղանկայտուացին 920<sup>ն</sup>  
գրած է; Առողիկ որ անկէ 84 տարիներ վերջ  
կը գրէ, ինչու համար չ'իշխըր զայն — Ա-  
սոր ալ պատճառն այն պէտք է ըլլայ, որ Մով-  
սէսի պատմութիւնը՝ իբրև Հեռացած ցեղի  
մը մասնաւոր պատմութիւնը՝ մնացած է  
միայն իր միջավայրին՝ Աղուան երկրին մէջ,  
և շատ ուշ տարածուած է Հայաստանի բնիկ  
գաւառները :

Հրալեայ Յ. Ամասեան

1897 Մ-յի 10 Պ-րէի

\* « Ես Աղբիւնէն » և այլն. Մոսկովայի տպա-  
գրութեան մէջ պատմութեան կարգէն վեր-  
ջուած և ի ստորև իջիկ զըռուած է, իբրև յա-  
ւելուած կամ յիշատակարան գրչին և ոչ մասն  
պատմութեան :

